

# Visa Signature Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	4 000 դրամ ամսական <sup>1</sup> կամ 40 000 ՀՀ դրամ տարեկան <sup>2</sup>
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք <sup>3</sup>	- ՀՀ դրամ՝ 18% - արտարժույթային 17%
4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գործարքների համար)	գործարքի ձևակերպման օրվանից մինչև հաջորդ ամսվա 14-րդ օրացուցային օրը
5. Ամսական պարտադիր մարումներ	10%
6. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	25 000 ՀՀ դրամ տարեկան
7. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո
8. Քարտի գործողության ժամկետ	5 տարի
<b>9. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկ տրամադրման կետերում<sup>4</sup></b>	
• <i>ՍԿՐԱ Բանկ (արտարժույթ կանխիկացնելու դեպքում գործում է այդ պահին Բանկում գործող սակագինը, որը հրապարակվում է Բանկի «Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման» սակագներում)</i>	1%
• <i>Այլ բանկեր Հայաստանում</i>	1%
• <i>Այլ բանկեր արտերկրում</i>	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
10. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով	1%
11. Անկանխիկ վճարում քարտով	անվճար
12. Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> <li>▪ 2,500,000 ՀՀ դրամ</li> <li>▪ 5,000 ԱՄՆ դոլար</li> <li>▪ 5,000 եվրո</li> </ul>
13. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	5
14. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> <li>▪ 2,500,000 ՀՀ դրամ</li> <li>▪ 5,000 ԱՄՆ դոլար</li> <li>▪ 5,000 եվրո</li> </ul>
15. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	0.5%
16. Բանկումատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ <sup>4</sup>	0.2%
17. SMS-տեղեկացում ծառայություն	անվճար
18. Քարտի փոխարինում (Հայաստանում)	5 000 ՀՀ դրամ
19. USSD-տեղեկացում ծառայություն	10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱՍՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)

### Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ՍԿՐԱ ԲԱՆԿՈՒՄ Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժույթային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից ավել), և՛ արտարժույթային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժույթային ավանդների դեպքում - դրամային ավանդը ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապահի բանավոր հանձնարարությամբ:

### Սակագներում օգտագործված տեղանիշների մեկնաբանություն

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործում մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապահը տոկոսագումարներ չի վճարում:
- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապահը պարտավորվում է քաջ պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապահի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռնել վերջինից օգտագործել հիմնական քարտի հաշվին ավել միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապահի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

<sup>1</sup> Քարտը տրամադրվելուց հետո 6 ամսվա ընթացքում փակելու դեպքում գանձվում է միջնորդավճարը 6 ամսվա համար նախատեսված սպասարկման միջնորդավճարի և քարտի փակման օրվա դրությամբ քարտապահի կողմից վճարված ամսական սպասարկման միջնորդավճարի տարբերության չափով:

<sup>2</sup> Բանկում «Դասական», «Կուտակային» և «Ընտանեկան» ժամկետային ավանդ ունեցող հաճախորդներին դրամական միջոցների գրավային ապահովվածությամբ տրամադրվող վարկային գծերով քարտերի դեպքում 30 000 ՀՀ դրամ տարեկան:

<sup>3</sup> Վարկային գծի չունեցող քարտերի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն չափով:

<sup>4</sup> Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկում առ սպասարկող բանկի կողմից: